ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/24» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴ (ԷԱՃ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 17.12.2018թ.
ժամը 11^{00}

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետի տեղակալ, ՔՀՇ 1-ին դասի խորհրդական Հ. Մելիքյան,
Գնահատողներ՝
ՀՀ ՀՈՒ ԹՎ իրային ծառայության պետ, գնդապետ Վ. Պապյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, ՔՀՇ 1-ին դասի խորհրդական Գ. Ռիստյան,
ՀՀ ՀՈՒ ԹՎ իրային ծառայության պահեստների, տեխնիկական միջոցների և բաղնիք-լվացքատնային սպասարկման բաժանմունքի ավագ ինժեներ, կապիտան Վ. Բարսեղյան,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ, ՔՀՇ 2-րդ դասի առաջատար ծառայող Գ.Գևորգյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/24» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ. Գևորգյան)

1. Մասնակիցների՝ ԷԱՃ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկայության և դրանց ԷԱՃ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ ԷԱՃ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի առկայության, դրանց ԷԱՃ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Գ. Գևորգյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ «Պրեմիեր» ՍՊԸ-ն չի հանդիսանում ՀՀ ռեզիդենտ:
Մասնակիցների՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/24» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերն առկա են և համապատասխանում են ԷԱՃ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ «ԳԴԱԿ» ՍՊԸ-ի, «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի և 7-րդ ու 8-րդ չափաբաժինների մասով «ՕԲՈՐՈՆ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ի, մասնավորապես՝ «ԳԴԱԿ» ՍՊԸ-ի ներկայացրած ապրանքի տեխնիկական բնութագրում բացակայում է տեխնիկական բնութագրի անբաժանելի մաս կազմող էսքիզը, ինչպես նաև սխալ է նշված ճարմանդի թեքությունը, 4-րդ չափաբաժնի մասով «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած ապրանքի տեխնիկական բնութագրում բացակայում է տեխնիկական բնութագրի անբաժանելի մաս կազմող էսքիզը, 6-րդ չափաբաժնի մասով «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած ապրանքի տեխնիկական բնութագրում նշված չէ պիտակավորման մասին տեղեկությունը, 7-րդ ու 8-րդ չափաբաժինների մասով «ՕԲՈՐՈՆ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ի ներկայացրած ապրանքների տեխնիկական բնութագրերում հստակեցված չէ առաջարկվող ապրանքների իրանների մասին տեղեկությունը: Ուստի, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը, գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը և 21.12.2018թ. մասնակիցներին ծանուցել անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ: «ԳԴԱԿ» ՍՊԸ-ն և «ՕԲՈՐՈՆ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել են անհամապատասխանությունները, իսկ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն՝ ոչ:
Քանի որ 14.12.2018թ. ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն «ԳԴԱԿ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 12000 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորություններ, որոնք սակայն չեն գերազանցում «ԳԴԱԿ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի մեկ տոկոսը և Օրենքով սահմանված շեմը, իսկ մյուս մասնակիցները ժամկետանց պարտավորություններ չունեն, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց մասնակիցների ներկայացրած հայտարարությունները համարել իրականությանը համապատասխանող:
1.2 27.12.2018թ. հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետը, գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, իսկ «ԳԴԱԿ» ՍՊԸ-ի, «ՕԲՈՐՈՆ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ի, «ԴԵՍԻ» ՍՊԸ-ի և «Պրեմիեր» ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/24» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջիններիս հայտարարել ընտրված/հաղթող/ մասնակիցներ:
Գնահատող հանձնաժողովը որոշեց ընթացակարգը 4-րդ և 6-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին):
1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/24» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Գ. Գևորգյան)

Հանձնաժողովը որոշեց հայտարարել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/24» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի արդյունքները և հաստատել կնքվելիք պայմանագրի մասին հայտարարության տեքստը: Հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:

Գնահատող Հ. Մելիքյան

Գնահատող Վ. Պապյան

Գնահատող Գ. Ուխտյան

Գնահատող Վ. Բարսեղյան

Գնումները համակարգող Գ. Գևորգյան